ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

*Հարգելի՛ պարոն Միրզոյան,*

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի և ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածներով՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ ենք ներկայացնում «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին, «Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների մասին» օրենքում լրացում կատարելու մասին, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ) փաթեթը:

Խնդրում ենք

ներկայացված Նախագծերը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:
Համաձայն «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշման 25-րդ կետի՝ գրությանը կից ներկայացվում են՝

1) Նախագծերը (հիմնական զեկուցող՝ Նիկոլայ Բաղդասարյան),
2) Նախագծերի ընդունման հիմնավորումը,
3) փոփոխվող իրավական ակտերի հոդվածների մասին տեղեկանքները:

Հարգանքներով՝
ՀՀ ԱԺ պատգամավորներ՝

Նիկոլայ Յու. Բաղդասարյան

Վիկտոր Ենգիբարյան

Լիլիթ Ստեփանյան